

թիւն մը կազմելու համար ։ Այ զարմանայի պատիսի լեռու մը լսելով, որ ինք բայրովին անձաւակ կը թուէր ։

Ի՞նչպէս կարելի է, ըսի, որ գուռք բանաւոր դատիք քսանուցինք օրուան զիւաւաղարում մը առանց պաշարի եղկու միլիոն բնակչէ ունեցած քաղաքի մը համար, որ գորեթէ երեք ամսէ ի վեր պաշարուած է։

— Ո՛չ, անբանաւոր չէ, անդամ մալ իրկնեց ինձ : Բրուսիս շատ պիտի տուժէր քսանուցինք օրուան զիւաւաղարման մը միջոց . . .

Մնացած երկար խօսակցութեան մէջ, լորտ կրէնլիլ ընդհանրապէս ջանաց համոզել Գտաղիոյ պատգամաւորը, որ ազգային Պաշտպանութեան վարչութիւնը մտապիր պէտք կը ըլլալ օրինաւոր ճանշնել ինքինքը, ամէն հնարաւորութեամբ իրեն հետ միացնելով ազգային նոուիրակութիւն մը : Իրբեք ճշշմարիս Անգղիացի, Գաղղիոյ կացութեան մէջ՝ իրեն համար ամենէն զարմանալին այս էր որ, եթէ իրօց կար իշխանութիւն մը, սակայն չկար ո՞ր և ո՞րինաւոր հեղինակութիւն մը, խօսաբանական երեսփոխանութիւն մը : Ես ինքը կը ճարտարամտէր, օրինափիր ժողով մը շըլլալուն պատճառաւ, անոր փոխանակող բան մը հնարել Ես կը հարցնէր թէ ինչու Պաշտպանութեան վարչութիւնը ժողովք մը չէր կազմեր գաւառներու ընդհանուր խորհուրդներով (Conseils généraux) : Յեւայ իր կարծիքը յայտնելով ըստ թէ ընտրութիւնները առանց զիւավագարի ալ կրնային ըլլալ, և թէ, հարկ եղած ատեն, կարենութիւն չկար՝ թշնամին քրաւուած Գաղղիոյ մասերուն խորհուրդ հարցներու : Օրինական ժողով մը հաստատելու համար, բաւական էր զեռ ազատ մացած զաւաներու բոււէնները . . .

Խսկ բուն խնդրին գալով, իր կարծիքն ալ Պ. ար Պէսովի կարծեաց հետ նոյն էր. առանց յամանելու խաղաղութիւն ընել, առ մի ցաւալի զոհողութեանց չենթարկուելու համար :

Քանի մար վերջ, Գաղղիոյ պատգամաւորը Հասուրան զգեկին մէջ Պ. կելտըսնէ հիւրասիրուած էր : Անգղիոյ առաջին նախարարը մի և նոյն լեռուն բանեցուց, և

ինըն ալ Արտաքին գործոց նախարարին մերժումներն երկրորդեց՝ թէ և աւելի մեծ պերամակութեամբ :

Լա Ֆոնդէնի առակներուն մէջ կը գտնուին ամէն հնարաւոր զւաքեր և մարդկային գործոց ամէն պարագաները : Պ. Ռէվլինիկեր, կելտարանի նահապետական առանձնարանը թողուցած ատեն, ստիպուցաւ յիշել պատուելիին ու խղղուող աշակերտին առակը :

Լուսնաւայր

ԲՆԱԿԱՆ ԱԿԱԴԵ

1900 ԴԻՏԱԿԸ

ԱԱԱ մեծի զիտակին խողովակը 60 մեղր երկայն է, ծակին լայնութիւնը 1,50 մեղր է. և իրեն սսպնաձեւ պապին 1,25 տրամագիծ ունի. ամբողջութեան ծանրութիւնը 20,000 հազարարգամէ աւելի է : Բնակնարար այսպիսի երկայնութիւնն և ծանրութիւնն ունեցող զիտակ մը, սովորական զիտակաց նման մեքենականութեամբ վեր կամ վար իշեցնել՝ աչ կամ ձափի զարցնելը, անկարելի բան մ'է. որովհետեւ 60 մեղր մետաղեայ խողովակը կրնայ ծոիլ և զատառիլ : Ռւաստի այս գոււարաքեհան յաղթերու համար, զիտակը հորիզոնական զիրքով այցեւայլ մոյթերու վրայ յեցած անշարժ կը կինայ : Երկինքը զիտակը համար կը նայի խորոր հայելոյ մը մէջ, որ շարժական է նման աշխարհացոյց զունիքրու : Այս հայելն կարող է արեւելքէ արեւմուտը ընթացող որ և իցէ ասաել ճառապայմները զիտակին հաղորդել : Թէպէտեւ սսպնաձեւը 4 մեղր և 25 հարիւրորգանեղր է, բայց երկնագէտ հայելոյ ապակին 2 մեղր տրամագիծ ունի, 0,27 հաստութիւն և 3600 հազարագրամ ծանրութիւն . այսպիսի ընդարձակ մակերեւոյթ ունեցող հայելոյ մը շինուիլը՝ բանի մը ամիս առաջ՝ անկարելի կը համարուէր. բայց Պ. կօթիէ համբաւաւոր ա-

բունստագէտը՝ յաջողեցաւ շինել՝ տալով
հայելոյն պահանջուած կառարեալ ողորկու-
թիւնը:

Դիտակը երկու սովնաձեւ ունի՝ որոնք
ուղղահայեաց կերպով բոլիբով հաստատուած
են շարժական կառքի մը վրայ՝ որով վայր-
կենական կերպով իրարու տեղի կրնան զրա-
ւել: Ասոնց մին պարզապէս զիտելու համար
է, իսկ միւսը տեսնուած առարկայի լուսա-
նկարելու, ասով ուզանուած համեմատ պիտի
յաջողինք ուսումնասիրել, գծել և պատկերել
երկնից աստղերը, և այս:

Գործիքին բովանդակ ծախըը 4.400.000
ֆրանք եղաւ: Լուսոյ արամագիծը ոսպնա-
ձեփ վրայ 60 հարիւրամեղը է. ատան ան-
գամ մեծնող խոշորացոյց ապակիսի մը
զիտելով զայն՝ ընդունուած մեծութիւնը 6000

անգամ աւելի պիտի ըլլայ՝ որ կը համապա-
տասխանէ լուսոյ մերձենալուն՝ ոչ մէկ մեղրի՝
այլ 64 հազարամեծորի:

Այս պայմաններով պիտի կարողանանք
4.000 մեղր մեծութիւն ունեցող իրերը զիրաւ
տեսնել. Բայց շատ հաւանական է որ իրերը
պիտի յաջողին մեծցնել 40,000 անգամ,
և այն ատեն պիտի տեսնենք մենք զլուսին՝
մեզմէ 38 հազարամելոր հեռու:

Այս հրէշ զիտակը այժմ լըլնալու վրայ
է: Յիշակի սա 1900ի Փարիզու աշխարհա-
հանդիսին զիխաւոր զարդը պիտի ըլլայ և
զովով գործոց մինչեւ ցարդ եղած՝ տեսա-
րանական մեքենայից: Անշուշան նոր լոյս և
մղում պիտի տայ տիեզերագիտութեան՝ այս
Փաղղիական հանճարի նոր պուոզը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. — Միկիթար	• • • 297
b. Հ. Ս. — Համբ և իրենց ստուգաբաւ-	
թութիւմը	• • • 300
ՀՖՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Բնաշխարիկ քառա- րամ. Ախալքալաք	• • • 302
Պրոբասիկէ	• • • 307
Տէ ԱՄԴԻԶԻՆ. — Ճառեր մանջերու համար թարգ. ՔԱԱԽԱՆՑԻՆԵԱՆ Հ. Ա.	• 312
ՖՐԱՆՍՈՒԱ ԳՈՐէ. — Աւետարամ մը. — երկրիմ պատասխանը. թարգ. ՀԱԶԻ-	
ԿԱՆ. Հ. Ա. • • • 317	
ՀԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. — Երկու խօսք Բիշ-	
րակնի մէկ գրախօսակամի մասիմ	• 318
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Մագմիսական քում	• 324
Հայկական յօրուածմեր հրատարա- կուած օտապազզի թերթերու մէջ	• 325
ԱԺԱՌԵԱՆ Հ. Ա. — ՔՅԱՌԵՐԻՄ Սուչավայի քարրասիմ	• • • • 325
ԳՐԱԽԱՆԱԿԱՆ Հ. Ա. — Մատթէուս Առաքելու	• 327
հայեցի	• • • • 327
* — Հայ ուամկիմ հաւատքը	• • 328
ՈՒՄՍԵԱՆ Հ. Վ. — Վելիկմ հառիք. — Հրէայ Աքմէրը	• • • 328
Դ. Հ. Ա. — Վելիկմ Հառիք. Երլուսամրդ անգիտացիք	• • • • 328
Մուրաստ-Շափայէլամ Լիլլունի աշա-	
կերտաց պսակաւորութեամ Բանդէսմ. 329	
Ե. Հ. Ս. — Հանդէս Համբիփից - Մուրիամ. դակ - Համբազիուակ - Մշակ - Տարագ	
- Համդէս ամնօրեայ - նոր կեամք . 334	
ԵԱՑԻԿԵԱՆ. Հ. Փ. — Քարպակամ. Դրա- նազուսկամ պատգամաւորութիւմ մը	
1870ին մէջ • • • • 339	
Բնարանակամ. — 1900ի Դիտակը	• 343

